ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի հունիսի 24-ի, ժամը 12:00-ի նիստի
N 12 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 08.05.2021) Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների ամբիոնի դոցենտ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Սուքիաս Հեգելի Ավետիսյանի** և նույն ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գայանե Մանվելի Սալնազարյանի** ռեկտորին ուղղված դիմումների մասին հարցը:

Զեկուցողներ՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողները նշեցին. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թվականի մայիսի 8-ի համարում հայտարարվել է մրցույթ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի** թափուր պաշտոնի համար, որին կարող են մասնակցել տնտեսագիտության դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք: Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար 2021 թվականի մայիսի 25-ին ռեկտորին դիմում է ներկայացրել Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Սուքիաս Հեգելի Ավետիսյանը**, իսկ հունիսի 7-ին՝ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գայանե Մանվելի Սալնազարյանը:** Նշվեց նաև, որ ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի հավակնորդները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀՊՏՀ կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության

ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել են անհրաժեշտ փաստաթղթերը:

Ս.Հ.Ավետիսյանը ծնվել է 1959 թվականի ապրիլի 28-ին Լենինական (Գյումրի) քաղաքում: 1976 թվականին գերազանցությամբ ավարտել է թիվ 25 միջնակարգ դպրոցը: 1978-1981 թթ. ղեկավարել է ուսանողական ջոկատների աշխատանքները Մարիական ԻՀ-ում և Տյումենի մարզում: 1981 թվականին գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղը՝ ստանալով ճարտարագետ-շինարարի որակավորում: 1981 թվականին պարգևատրվել է ԽՍՀՄ ԳԽ «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով: 1981-1982 թթ. եղել է Լենինականի մասնաճյուղի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար, 1982-1983 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1988 թվականին սովորել է Մոսկվայի կոմերիտական բարձրագույն դպրոցում:

Ս.Հ.Ավետիսյանը 2004 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2018 թվականին նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում: 2001 թվականին նրան շնորհվել է Բնության և հասարակական գիտությունների միջազգային ակադեմիայի իսկական անդամի, քաղաքագիտության ակադեմիկոսի կոչում: Հրատարակել է 9 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք (1 մեթոդական ցուցումներ, 8 գիտական հոդված):

Ս.Հ.Ավետիսյանի աշխատանքային գործունեությունը. 1984-1989 թթ.՝ էլեկտրատեխնիկական գործարանի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար, 1989-1990 թթ.՝ ՀԿԿ Լենինականի քաղկոմի հրահանգիչ, 1990 թ.՝ Լենինականի քաղաքային սովետի պատգամավոր, 1990-1999 թթ.՝ Լենինականի Մոսկովյան շրջխորհրդում՝ գլխավոր ճարտարագետ, փոխքաղաքապետ, 1995, 1999, 2003, 2008 և 2012 թթ.՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, 2009 թվականից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղում՝ ասիստենտ, ամբիոնի վարիչ, փոխտնօրեն, տնօրեն, ուսումնական բաժնի վարիչ, ֆակուլտետի դեկան, դոցենտ: 2006 թվականին պարգևատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով, 2016 թվականին՝ ՀՀ երախտագիտության մեդալով: Ամուսնացած է, ունի 3 երեխա, 5 թոռ:

Գ.Մ.Սալնազարյանը ծնվել է 1980 թվականի սեպտեմբերի 10-ին Շիրակի մարզի Փանիկ գյուղում: 1987-1997 թթ. սովորել և ավարտել է Փանիկի միջնակարգ դպրոցը: 1997-2002 թթ. սովորել և ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը՝ ստանալով տնտեսագետի որակավորում «Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2008-2010 թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում:

Գ.Մ.Սալնազարյանը 2010 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական

աստիճան: 2014 թվականին նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում: Նա հրատարակել է 24 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք (1 մեթոդական ցուցումներ, 23 գիտական հոդված:

Գ.Մ.Սալնազարյանի աշխատանքային գործունեությունը. 2005-2006 թթ.՝ Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի տնտեսագիտության և քաղաքագիտության ամբիոնում՝ դասախոս, 2006 թվականից առ այսօր՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնում՝ դասախոս, ասիստենտ, դոցենտ, 2018-2020 թթ.՝ ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար:

Հարցը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի գիտական խորհրդի՝ 2021 թվականի հունիսի 21-ի արտահերթ նիստում (արձանագրություն N 3), որտեղ երաշխավորվել է (կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) Ս.Հ.Ավետիսյանի և Գ.Մ.Սալնազարյանի թեկնածությունները ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2021 թվականի հունիսի 22-ի, ժամը 13:00-ի նիստում (արձանագրություն N 5), որտեղ նույնպես որոշվել է (կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) Ս.Հ.Ավետիսյանի և Գ.Մ.Սալնազարյանի թեկնածությունները ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Սուքիաս Հեգելի Ավետիսյանի և տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գայանե Մանվելի Սալնազարյանի թեկնածությունները դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն, կողմ՝ 58, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Սուքիաս Հեգելի Ավետիսյան՝ կողմ՝ 5, դեմ՝ 51, անվավեր

քվեաթերթիկ՝ 2, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գայանե Մանվելի Սալնազարյան՝ կողմ՝ 51, դեմ՝ 5, անվավեր քվեաթերթիկ՝ 2:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Ղեկավարվելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգի» 34-րդ կետով, հիմք ընդունելով **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի** թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 3 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները **(կողմ՝ 51, դեմ՝ 5, անվավեր քվեաթերթիկ՝ 2)՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի** պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գայանե Մանվելի Սալնազարյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. հունիսի 24

Երևան